ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

04-ը մայիսի 2011թ.

Քաղաք Իջևան

# ՕՐԱԿԱՐԳ

*2011թ.մայիսի 4-ին կայանալիք Տավուշի մարզային զորակոչային հանձնաժողովի նիստ*

1. **Զորահավաքային նախապատրաստության ուղղությամբ իրականացվող աշխատանքների ընթացքի և առաջիկա միջոցառումների մասին**

   Զեկ.՝ Ա.Ղուլարյան – ՀՀ Տավուշի մարզպետ

2. **2010թ. աշնանային զորակոչի արդյուքների ամփոփում և 2011թ. գարնանային զորակոչի խնդիրների պարզաբանում,**

   Զեկ.՝ Հ.Ավալյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ

3. **Զինվորական հաշվառումից և զորակոչից խուսափած անձանց որոնողական աշխատանքների վիճակն՝ ըստ համայնքների և զինվորական կոմիսարիատների,**

   Զեկ.՝ Հ.Ավալյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ

4. **Բժշկական հիմնարկներում պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարեկետում ստացած զորակոչիկների բուժման, ինչպես նաև նախազորակոչային և զորակոչային տարիքի պատանիների բժշկական հետազոտման ապահովում,**

   Զեկ.՝ Կ.Դովլաթբեկյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

5. **ՀՀ կառավարության 27.05.2010թ. N657 որոշման պահանջների պարզաբանում. տեղական ինքնակառավարման՝ համատիրությունների և լիազոր մարմինների կողմից գրանցամատյաններում զինապարտների հաշվառումը և զինկոմիսարիատների հետ փոխհամագործակցության աշխատանքների կազմակերպումը,**

   Զեկ.՝ Մ.Մխիթարյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ

6. **<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի պահանջների համաձայն զինվորական հաշվառման և զորակոչի կազմակերպման աշխատանքներում թերացողների պատասխանատվության և տույժի ենթարկելու մասին:**

   Զեկ.՝ Հ.Ավալյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

## ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

04.05.2011թ. ք.Իջևան

Նիստը վարում էր ՀՀ Տավուշի մարզպետ Ա.Ղուլարյանը.

Մարզխորհրդի 63 անդամներից ներկա էին 56-ը:

Նիստին ներկա էին ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալները, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը, ՀՀ Տավուշի մարզի դատախազը, ՀՀ Ոստիկանության Տավուշի մարզային վարչության պետը, ՀՀ ԱԱԾ Տավուշի մարզային վարչության պետը, ՀՀ ՌՈ Լոռվա կայազորի Իջևանի բաժնի պետը, ՀՀ Ոստիկանության Իջևանի, Դիլիջանի, Բերդի և Նոյեմբերյանի բաժինների պետերը, Իջևանի, Դիլիջանի, Բերդի և Նոյեմբերյանի զինկոմները, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների վարիչներ և այլն:

### 1. ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԻ ԵՎ ԱՌԱՋԻԿԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

/Զեկ.՝ Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ – ՀՀ Տավուշի մարզպետ/

Մարզպետը, ողջունելով ներկա գտնվողներին, խոսեց մարզում զորահավաքային նախապատրաստության ուղղությամբ իրականացվող աշխատանքների ընթացքի և առաջիկա միջոցառումների մասին, նշելով, որ 2011թ. անցած ամիսների ընթացքում, համաձայն մարտական պատրաստականության պլանի, տեղի են ունեցել մարտավարական զորավարժություններ՝ զինապարտների և տեխնիկայի համալրմամբ, որոնց ընթացքում Իջևանի, Դիլիջանի և Բերդի զինկոմիսարիատները կատարել են իրենց առջև դրված խնդիրները և ստացել "լավ" գնահատական՝ արժանանալով հրամանատարության խրախուսանքին:

Մարզպետը խոսեց զինկոմիսարիատների անձնակազմի, համայնքապետարանների աշխատակազմերի ակտիվ և քրտնաջան աշխատանքի մասին, նշելով, որ ինչպես միշտ, այս անգամ ևս իրենց օպերատիվ աշխատանքով աչքի են ընկել ոստիկանության մարզային վարչության և տարածքային բաժանմունքների աշխատակիցները: Այժմ զինկոմիսարիատների ու համայքների համատեղ ուժերով իրականավում է կցագրման և առաջիկա մարտավարական զորավարժությունների նախապատրաստական աշխատանքներ:

Մարզպետը նշեց նաև, որ խնդիրը ծանր է նրանով, որ գարնան գյուղատնտեսական աշխատանքների սեզոնն է, բայց անհրաժեշտ է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները՝ առաջադրանքը սահմանված կարգով կատարելու համար:

Ելույթ ունեցան տարածքային զինկոմները, նրանք նշեցին համայնքների հետ իրականացվող աշխատանքներում ակտիվ համագործակցության մասին և հույս հայտնեցին, որ տրված առաջադրանքը կկատարեն համատեղ ուժերով:

<u>Առաջարկվեց.</u>

1. **Համայնքների ղեկավարներին**. տարածքային զինկոմիսարիատներին ցուցաբերել ամենայն աջակցություն առաջիկա մարտավարական զորավարժությունների նախապատրաստական

աշխատանքներում, պատրաստվածության աստիճանը հասցնելու օրենքով սահմանված պահանջների մակարդակին:

2. **Մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Հ.Ավալյանին**. կցագրված ավտոտրանսպորտային միջոցները ավտոդողերով ապահովելու առաջարկություն ներկայացնել ՀՀ պաշտպանության նախարարին՝ զինկոմիսարիատներում հաշվառված տրանսպորտային միջոցների սեփականատերերին զորամասերից դուրս գրված ավտոպահեստամասեր տրամադրելու համար:
3. **Տարածքային զինկոմներին**. զինապարտների կցագրման հաշվառման և ամրագրման աշխատանքների կատարման ընթացքի մասին պարբերաբար զեկուցել մարզպետին:

## 2. 2010թ. ԱՇՆԱՆԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ 2011թ. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

---

/Զեկ.՝ Հ.Ավալյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ/

Զեկուցողը նշեց, որ 2010թ. աշնանային զորակոչի առաջադրանքը կատարել են մարզի բոլոր զինկոմիսարիատները, մարզում 342-ի փոխարեն կատարվել է 343 /+1/: Զորակոչված պատանիներից կենտրոնական հավաքակայանից ետ են վերադարձվել 30-ը, որոնցից կրկին զորակոչվել են 22-ը, չզորակոչված 8 զինակոչիկներին տրվել է տարկետում: Տարածքային զինկոմիսարիատներ են ներկայացել նախկինում չհաշվառված 12 պատանի: 2010թ. աշնանային զորակոչից խուսափել են 16 պատանիներ, որոնց անձնական գործերը հանձնվել են իրավապահ մարմիններին:

2010թ. ընթացքում ուսումնական հաստատությունների դիմորդ-թեկնածուներ են ընտրվել 43-ը, որոնցից ընդունվել են ՌՈՒՀ 29-ը:

Տարածքային զինկոմիսարիատում պատրաստվել են 'C' խմբի 61 վարորդներ, որոնք զորակոչվել են ՀՀ ԶՈՒ ծառայության:

Մարզի զինկոմիսարիատներից 2010թ. աշնանային զորակոչին զորակոչված վաղաժամկետ զորացրված զինծառայողներ չկան:

Այլ ընտրանքային ծառայության զորակոչվածներ չկան:

2010թ. ընթացքում իրականացվել է 1994թ. ծնված պատանիների կցագրում:

Կցագրման ենթակա 1110 պատանիներից կցագրվել են 951-ը /87 տոկոս/:

Կցագրման ընթացքում արձանագրված ցածր տոկոսը բացատրվում է նրանով, որ նախկինում սեփականաշնորհման և այլ նպատակներով ընտանիքի անդամների թիվը մեխանիկորեն ավելացվել են ռուսաստանաբնակ թոռների հաշվին, կամ երեխան ծնվելուց հետո տեղափոխվել են այլ երկրներ բնակության: 2010թ. չկցագրված բոլոր պատանիները բացառապես բնակվում են Հայաստանի սահմաններից դուրս:

Զեկուցողը նշեց նաև, որ 2011թ. գարնանային զորակոչը սահմանված կարգով իրականացնելու նպատակով մարզային զորակոչային հանձնաժողովը ձեռնարկած միջոցառումների շնորհիվ պատրաստ է կատարելու տրված առաջադրանքը և առաջարկում է.

- զինակոչիկների հետազոտման ճանապարհածախսերը հաշվարկել ներկա գործող երթուղային տոմսերի արժեքով
- իրավական ուժ տալ և պարտադրել այն քաղաքացիներին, ովքեր փախստականի կարգավիճակով ազատվել են ժամկետային զինծառայությունից և հետագայում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն են ընդունել՝ ՀՀ Զինված ուժերում ծառայելու պայմանագրային կարգով
- Զև 2 ցուցակները վերջնական տեսքի բերելու նպատակով հնարավորություն ստեղծել համայնքների գրանցամատյանները ճշտելու:

Հանձնարարվեց.

1. **Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա.Փաշինյանին.**

1) լուրջ ուշադրություն դարձնել մարզի հանրակրթական դպրոցներում ռազմագիտություն և ֆիզկուլտուրա առարկաների կաբինետները տեսադիտակտիկ նյութերով ապահովելուն և դասավանդման որակին
2) ակտիվացնել ուսումնական հաստատություններում անցկացվող ռազմահայրենասիրական միջոցառումները
3) ընդունել ի գիտություն, որ 2011թ. գարնանային զորակոչի ընթացքում, զորակոչային ռեսուրսներն առավելագույնս օգտագործելու նպատակով փոխադրման, ավարտական քննությունները, դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանություններն ավարտվելու են. դպրոցներում՝ մինչև 2011թ. հունիսի 25-ը, քոլեջներում, ուսումնարաններում՝ մինչև 2011թ. հունիսի 20-ը, բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ մինչև 2011թ. հունիսի 1-ը, մագիստրոսական և ասպիրանտական կրթություն իրականացնող բուհերում և գիտական կազմակերպություններում պետպատվերի շրջանակներում /տարկետման իրավունքով/ մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ընդունելություններն ավարտվելու են մինչև 2011թ. հունիսի 20-ը
4) ուսումնական զենքի և զենքի պահպանման սենյակների ապահովումը ավարտել և զեկուցել մարզպետին:

2. **Մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Հ.Ավալյանին.** ավտոդպրոցում սովորող սոցիալապես անապահով կուրսանտների ճանապարհածախսի վերաբերյալ ներկայացնել առաջարկություն:

## 3. ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԻՑ ԽՈՒՍԱՓԱԾ ԱՆՁԱՆՑ ՈՐՈՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿՆ ԸՍՏ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏՆԵՐԻ

---

/Զեկ.՝ Հ.Ավալյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ/

Զեկուցողը նշեց, որ զինվորական հաշվառումից և զորակոչից խուսափող անձանց որոնողական աշխատանքները իրականացնում են պատկան մարմինները:

Ըստ զինկոմիսարիատների զորակոչից խուսափում են.

| | | | |
|---|---|---|---|
| Իջևան | 56, | որից հարուցվել է քրեական գործ | 34 |
| Դիլիջան | 57, | որից հարուցվել է քրեական գործ | 57 |
| Բերդ | 42, | որից հարուցվել է քրեական գործ | 33 |
| Նոյեմբերյան | 23, | որից հարուցվել է քրեական գործ | 13 |

2011թ. ընթացքում իրականացվում է 1995թվականի ծնված պատանիների կցագրում առ այսօր կցագրվել են

| | |
|---|---|
| Իջևանի զ/կ | 365-ից 305 (83.6%) |
| Դիլիջանի զ/կ | 162-ից 133 (82%) |
| Բերդի զ/կ | 255-ից 208 (81.6%) |
| Նոյեմբերյանի զ/կ | 193-ից 249 ( 85%) |
| Ընդամենը | 1075-ից 895 (83.2%) |

Չկզցագրված պատանիներից Հայաստանի Հանրապետությունում են գտնվում Իջևանից-7, Նոյեմբերյանից-3:

Մյուսները թվով 170 պատանի գտնվում են ՀՀ սահմաններից դուրս, իսկ մեզ ներկայացված պահանջը կցագրման վերաբերյալ 90 և ավելի տոկոս է:

Առաջարկվեց.

1. ՀՀ Տավուշի մարզային դատախազությանը /մարզի դատախազ Ա.Մանթաշյան/.

1/ Քննության առնել զինկոմիսարիատների կողմից տրված տարկետումների, զինվորական հաշվառումից և գրանցումից դուրս գրվելու և արտոնություններ տրամադրելու օրինականությունը:

2/ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել զորակոչից խուսափողների նկատմամբ և իրավասու պետական մարմինների միջոցով հայտարարել նրանց հետախուզում:

3/ Զորակոչի աշխատանքների հետ կապված մարզի դատախազության գործունեությունը վերցնել անմիջական վերահսկողության ներքո:

2. ՀՀ Ոստիկանության Տավուշի մարզային վարչությանը /պետ Վ.Վարդանյան/.

1/ Ապահովել զինակոչիկների անվտանգ տեղափոխումը և հասարակական կարգի պահպանումը զորակոչային տեղամասերում:

2/ Ապահովել մարզի տարածքում և մարզի տարածքից դուրս գտնվող զորակոչիկների որոնումները և նրանց պարտադիր ներկայանալը զորակոչային տեղամասեր:

## 4. ԲԺՇԿԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

---

/Զեկ.՝ Կ.Դովլաթբեկյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ/

Զեկուցողը նշեց, որ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում ստացած զորակոչիկների բուժումը իրականացվում է սահմանված կարգով՝ ըստ ամրագրված բուժհաստատությունների: Խիստ ուշադրության է արժանի կենտրոնական հավաքակայանից վերադարձածների խնդիրը, չնայած նախորդ տարիների համեմատ բավականին նվազել է դրանց թիվը, սակայն դեռևս մտահոգության առիթ է, երբ Իջևանի զինկոմիսարիատից վերադարձվել է 10, Դիլիջանի զինկոմիսարիատից՝ 4, Բերդի զինկոմիսարիատից՝ 4, իսկ Նոյեմբերյանի զինկոմիսարիատից՝ 12-ը, ընդամենը՝ 30: Իհարկե դրանցից կրկին զորակոչվել են Իջևանից 9-ը, դիլիջանից՝ 4, Բերդից՝ 4, Նոյմեբերյանից՝ 5: Այսպիսով չեն զորակոչվել 8-ը, որից մեկը Իջևանից, 7-ը Նոյեմբերյանից:

Հանձնարարվեց.

1. ՀՀ Տավուշի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Կ.Դովլաթբեկյանին.

1) Զինկոմիսարիատների հետ միասին կոմպլեկտավորել հանձնաժողովները բժիշկ մասնագետներով՝ նախապատրաստելով պահեստային բժիշկներ և անհատական կազմը ներկայացնել ՀՀ առողջապահության նախարարության հաստատմանը
2) Զինկոմիսարիատների հայտով զինակոչիկների ֆլյուրո /ռենտգեն/ զննում, սոնոգրաֆիկ հետազոտում, ինչպես նաև կանխարգելիչ պատվաստումներ կատարելու նպատակով հանձնարարել մարզի առողջապահական համակարգի բուժկանխարգելիչ հաստատություններին՝ ապահովել անհրաժեշտ քանակով պատվաստանյութեր, ռենտգեն ժապավեններ և երևակման նյութեր
3) առաջարկություն ներկայացնել ՀՀ առողջապահության նախարարությանը՝ խոլտերի ապարատ տրամադրելու վերաբերյալ:

## 5. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 27.05.2010Թ. ԹԻՎ 657 ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ՝ ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐՈՒՄ ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ԶԻՆԿՈՄԻՍԱՐԻԱՏՆԵՐԻ ՀԵՏ ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

---

/Զեկ.՝ Մ.Մխիթարյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ/

Զեկուցողը ներկայացրեց, որ ՀՀ կառավարության 27.05.2010թ. թիվ 657 որոշման պահանջներով ՀՀ Տավուշի մարզի համայքներում ընթացքի մեջ է զինապարտների մատյանի վարման և զինապարտների հաշվառման գործընթացը: ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի, ՀՀ պաշտպանության նախարարի և ՀՀ ոստիկանապետի եռակողմ հրամանի պահանջով բոլոր համայքներին մարզպետի շրջաբերականով տրամադրվել են զինապարտների ցուցակները և դրանց վարման կարգը՝ էլեկտրոնային կրիչներով:

Սույն թվականի ապրիլի 27-ին մարզպետարանում տեղի ունեցավ սեմինար պարապմունք, որին մասնակցեցին համայքների ղեկավարներ, աշխատակազմերի քարտուղարներ, գործընթացում ներգրավված համայնքային ծառայողներ, Իջևանի ՏԶԿ-ի ներկայացուցիչներ, մարզպետարանի աշխատակիցներ: Սեմինարն անցկացրին ՀՀ ՏԿՆ մասնագետներ Ս. Գևորգյանը և Ա. Սարգսյանը: Մանրամասն ստուգվեցին յուրաքանչյուր համայնքում իրականացված աշխատանքները, վեր հանվեցին թերություններն ու բացթողումները, տվեցին կոնկրետ հանձնարարականներ դրանք շուտափույթ վերացնելու համար:

Ներկայումս մարզպետարանի և տարածքային զինկոմիսարիտաների համագործակցությամբ իրականացվում են շուրջայցեր համայքներում՝ նպատակ ունենալով աջակցել վերը նշված թերությունների վերացմանը:

**Հանձնարարվեց.**

**1. ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Մ.Մխիթարյանին.**

1) հսկողության տակ պահել համայնքների կողմից ՀՀ կառավարության 27.05.2010թ. թիվ 657 որոշման պահանջների կատարման ընթացքը և իրականացված աշխատանքների կատարման մասին ներկայացնել տեղեկանք

2) առաջարկել համայնքների ղեկավարներին՝ ՀՀ կառավարության 27.05.2010թ. թիվ 657 որոշման պահանջները կատարել սահմանված կարգով և աշխատանքների ավարտի մասին տեղեկատվություն ներկայացնել մարզպետին:

## 6. <ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ> ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ԹԵՐԱՑՈՂՆԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

/Զեկ.՝ Հ.Ավալյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ/

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենքի պահանջների համաձայն զինվորական հաշվառման և զորակոչի կազմակերպման աշխատանքներում թերացողների նկատմամբ տույժեր են կիրառվել Նոյեմբերյանի և Դիլիջանի զինկոմիսարիատներում:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն:

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ